# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
## ՈՍԿԵՀԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Թիվ 01-30
«11» մարտի 2013թ.

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ*
*ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ*
*ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ*

*ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ*

Ի կատարումն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի վեցերորդ մասի՝ Ձեզ է ուղարկվում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատի գյուղական համայնքի 2013 թվականի մարտի 4-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ գյուղական համայնքի ավագանու 2012 թվականի N 31 -Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» N9-Ն որոշումը:

Միաժամանակ հայտնվում է, որ նշված որոշումը սահմանված կարգով ներկայացվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննության:

Առդիր՝ 34 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

112.2/2457-13
12. 03. 2013.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՀԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

«__04__» մարտի 2013թ. թիվ 9-Ն

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՀԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 31-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետով, երրորդ մասով, 56-րդ հոդվածի երկրորդ մասով .

*ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատի գյուղական համայնքի 2012 թվականի դեկտեմբերի 10 -ի N 31-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը՝
   1) Հաստատել տարեսկզբի ազատ մնացորդը ընդամենը՝ 33548,2 հազար դրամ,որից 4107,9հազար դրամը՝ վարչական բյուջե,իսկ 29440,3 հազար դրամը ՝ֆոնդային բյուջե: Վարչական բյուջի տարեսկզբի ազատ մնացորդից 3000.0հազար դրամը նախատեսել նախորդ տարում ֆինանսավորման ենթակա, սակայն չֆինանսավորված առկա պարտավորությունների կատարմանը ,իսկ 1107,9հազար դրանը ենթակա է ուղղման ֆոնդային բյուջե: Ընդամենը ՝ վարչական բյուջե՝3000.0հազար դրամ, ֆոնդային բյուջե՝30548,2հազար դրամ:

2) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիան պակասեցնել 3.4հազար դրամով՝ համաձայն «ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված հատկացումների ընդհանուր ծավալի բաշխման:

3) Հողի հարկը ավելացնել 3.4 հազար դրամով:

4) 01բաժնի 1 խմբի 1դասի ՆՏՊ 4212 հոդվածը ավելացնել 2000.0 հազար դրամով:

5) 01բաժնի 1 խմբի 1դասի ՆՏՊ 4261 հոդվածը ավելացնել 200.0 հազար դրամով:

6) 01բաժնի 1 խմբի 1դասի ՆՏՊ 4264 հոդվածը ավելացնել 800.0 հազար դրամով:

7) 01բաժնի 1 խմբի 1դասի 5122 հոդվածը պակասեցնել 4000.0 հազար դրամով:

8) 01բաժնի 6 խմբի 1դասի 5121հոդվածը ավելացնել 6000.0 հազար դրամով:

9) 01բաժնի 6 խմբի 1դասի 5133հոդվածը ավելացնել 450.0 հազար դրամով:

10)04բաժնի 5 խմբի 1դասի 5113 հոդվածը ավելացնել 20098.2 հազար դրամով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

1. Գյոզալյան Արմեն
2 .Օհանյան Նորայր
3. Տեր- Խաչարյան Նիկոլայ
4.Պիշլանյան Սերոբ
5. Գյոզալյան Մարտիրոս
6.Ղուկասյան Կարապետ
7. Բարեղամյան Լևոն
8. Գալստյան Հրայր

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ.ՆԵՐՍԻՍՅԱՆ

2013 թվականի մարտի 04

գ. Ոսկեհատ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՀԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ դեկտ ԵՄԲԵՐԻ 10- Ի N 31-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 2013թ. ՄԱՐՏԻ 4-ի N 9- Ն ՈՐՈՇՄԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատի գյուղական համայնքի 2013թվականի մարտի 4-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատի գյուղական համայնքի ավագանու 2012թվականի N 31 -Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» N9-Ն որոշման ընդունումը պայմանավորված է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի պահանջի կատարմամբ. համայնքի տվյալ տարվա բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը նախորդ տարվա բյուջեի կատարման ընթացքում ծախսերի նկատմամբ գերազանցել է, որն անհրաժեշտ է բաշխել որոշման մեջ նշված ուղղություններով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատի գյուղական համայնքի 2013թվականի մարտի 4-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատի գյուղական համայնքի ավագանու 2012 թվականի N 31 -Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» N9-Ն որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չկա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Հավելված N 1

ՀՀ Արմավիրի մարզի Ոսկեհատ գյուղական համայնքի ավագանու 2013թ. մարտի 4-ի N9-Ն որոշման

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
(մարզի անվանումը)

ՈՍԿԵՀԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
(քաղաքային, գյուղական, թաղային համայնքի անվանումը)

# 2013 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵ

Հաստատված է ՈՍԿԵՀԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ համայնքի
(քաղաքային, գյուղական, թաղային համայնքի անվանումը)

ավագանու 2013 թվականի մարտի 4- ի N 9-Ն որոշմամբ
(ամիս ամսաթիվ)

ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ
(համայնքի բյուջեն սպասարկող տեղական գանձապետական բաժանմունքի անվանումը)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳևՈՐԳ ԳՐԻԳՈՐԻ
ՆԵՐՍԻՍՅԱՆ
(Անուն, հայրանուն, ազգանուն)